

## ԱՄԱՆՈՐ-2020

Տոնական տրամադրություն, շատ ժպիտներ, երգ ու պար: Ազգային գրադարանում աշխատանքային տարին եզրափակվեց ուրախ, հետաքրքիր եւ խորհրդանշական միջոցառմամբ: Ազգային ընթերցողներն ու աշխատակիցները հանդիպեցին ընթերցասրահից դուրս՝ մեծ բեմում:



Ամանորյա միջոցառման գաղափարը ծնվել էր, երբ աշխատակիցներն ու ընթերցողները միասին զարդարում էին գրադարանի գլխավոր տոնածառը:



Ընթերցասրահում ժամեր ու օրեր անցկացնող մեր սիրելի ընթերցողները ցանկություն հայտնեցին մեծ բեմում փայլել իրենց տաղանադով, հենց նրանց կատարումներով էլ մեկնարկեց տոնական միջոցառումը: Կիթառ, դաշնամուր, պար, զուգերգեր ու մեներգեր... Կասկած չմնաց՝ Ազգային գրադարանի ընթերցողները

լավագույնն են՝ ամենաընթերցասերը լինելուց բացի նրանք նաեւ ամենատուրախը, ամենանախաձեռնողը, ամենատաղանդավորն են...

Միջոցառման երկրորդ հատվածում ելույթ ունեցան գրադարանի ոչ պակաս տաղանդաշատ աշխատակիցները:

Միջոցառման եզրափակիչ ակորդը անակնկալ էր



բոլորի համար: Բեմ բարձրացավ գրադարանի տնօրեն Հրաչյա Սարիբեկյանը եւ...  
ձեռքը վերցրեց կիթառը՝ գեղեցիկ կատարումներով շնորհավորելով բոլոր ներկաների  
Ամանորն ու Սուրբ ծնունդը:

Ամանորյա ուրախ, տոնական տրամադրությունը կրկնապատկվեց, երբ դահլիճ



մտավ գրադարանի աշխատակից Ձմեռ պապը՝ ընթերցող Ձյունանուշի  
ուղեկցությամբ: Միջոցառման բոլոր մասնակիցներին եւ դահլիճում ներկա  
երեխաները ստացան լավագույն նվերները՝ ԳՐՔԵՐ: